



**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

## **Ավարտական հետազոտական աշխատանք**

Թեման- Համագործակցային ուսուցման ազդեցությունը սովորողների ուսումնառության արդյունքների վրա

Մասնակից՝ Ռուզաննա Զաքարյան

Դպրոց՝ Հ.Հովհաննիսյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Վերապատրաստող՝ Լ.Ղուկասյան

**Վաղարշապատ 2022թ.**

## Բովանդակություն

1. Նախաբան -----	2
2. Գրականության ակնարկ -----.....	4
3. Գործնական համատեքստ.....	6
4. Հետազոտության ընթաց-----	10
5. Ամփոփում-----	14
6. Գրականություն-----	16

## Ն ա խ ա ք ա ն

Վերջին տարիներին կրթության բովանդակության և նպատակների յուրացման առումով հսկայածավալ նորարարություններ և առաջարկություններ են արվել տարբեր երկրների և միջազգային կրթական կառույցների կողմից, մշակվել և ներդրվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման առավել արդյունավետ եղանակներ, սովորողների ուսումնական կարողությունների խթանման նոր հնարավորություններ: Մի կողմ թողնելով կրթության կազմակերպման տարբեր եղանակները՝ այս աշխատանքում ներկայացվում են պատմության դասերի ուսուցման առանձնահատկությունները՝ միջառարկայական կապեր ստեղծելիս և այդ գործընթացի ազդեցությունը սովորողների վրա:

Յուրաքանչյուր մանկավարժի խնդիրն է զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, հաղորդակցային ունակությունները, սովորեցնել զգալ արվեստի ստեղծագործությունների կատարելությունն ու ներդաշնակությունը, գրասիրտ, զգայուն վերաբերմունք դաստիարակել շրջապատի նկատմամբ: Այդպիսի հատկանիշների զարգացումը նշանակում է հաղորդակցում համամարդկային մշակույթին և նրա դրսևորումներին՝ գիտական հետազոտման մշակույթին, գործունեության մշակույթին, գեղագիտական մշակույթին, միջանձնային հաղորդակցման մշակույթին, վարքի մշակույթին և այլն: Ուստի մենք կանգ կառնենք Պատմություն առարկայի դասավանդման ընթացքում միջառարկայական կապերի ազդեցության վրա և ուսումնասիրության օբյեկտ կդիտարկենք սովորողներին:

Թեմայի արդիականությունը՝ Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության

անհրաժեշտ պայմաններից են:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ուսուցիչների համագործակցության արդյունավետությունը առարկայի դասավանդման ընթացքում:

**Հետազոտության խնդիրներն են՝**

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. բացահայտել քիմիայի և այլ առարկաների միջառարկայական կապերի արդյունավետ ուղիներն ու միջոցները,
3. ուսումնասիրել սովորողների վրա թողած ազդեցությունը քիմիայի և այլ առարկաների համատեղ դասավանդման ընթացքում:

## Գրական ակնարկ

Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան՝ այսօր մեծանում են առարկաների միջև կապերի բացահայտման դերն ու նշանակությունը: Այս հարցին անդրադարձել են բոլոր ժամանակաշրջանների մեծ մանկավարժները: Օրինակ՝ Յան Ամոս Կոմենսկին դիդակտիկայի սկզբունքների դասակարգման մեջ առանձնացնում էր համակարգվածության և հաջորդականության սկզբունքը, որի տակ հասկանում էր դպրոցական առարկաների միջև փոխադարձ կապերի ստեղծումը: Ընդ որում՝ այնպիսի կապերի, որոնց միջոցով այդ առարկաները նպաստեն մեկը մյուսի ըմբռնմանն ու յուրացմանը: Մեծ մանկավարժը նկատում է, որ ոչ ոքի հնարավոր չէ կրթություն տալ մի որևէ մասնակի գիտության միջոցով՝ անկախ մնացած գիտություններից<sup>1</sup>:

Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»<sup>2</sup>:

Գիտելիքների համակարգը կրթության բովանդակության առանցքային բաղադրիչներից է, որը պատկերացում է տալիս պատմական իրողությունների մասին: Պատմության ուսուցման ընթացքում աշակերտները ձեռք են բերում գիտելիքների այնպիսի տարրեր, որոնցից են փաստերը, իրադարձությունները, հասկացությունները, երևույթները և այլն: Նյութն ավելի մասշտաբի կդառնա, եթե ստեղծենք միջառարկայական կապ և աշակերտներին ինքնուրույն գործելու

<sup>1</sup>Վ. Խ. Հարությունյան, Յան Ամուս Կոմենսկին և նրա «Մեծ դիդակտիկան», Եր., 1970, 293 էջ.

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 301,

հնարավորություն տանք: Ցանկացած ուսուցիչ պետք է իմանա սովորողին ներկայացվող ընդհանրական պահանջների համակարգը՝ ըստ «Հանրակրթության պետական չափորոշի»<sup>1</sup>: Չափորոշիչը նորից վերընթերցելուց հետո, կարող ենք վստահորեն ասել, որ միջառարկայական կապերի իրագործումն ապահովում է հանրակրթության առջև դրված բազմաթիվ խնդիրների լուծման, աշխարհի միասնական ընկալման, պրոբլեմների լուծման ընդհանրական մոտեցման հարցը, ինչպես նաև աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման հարցը:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը հետաքրքրել է նաև ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյական դաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կրնոգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց , Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի՝ ապահովելով միջառարկայական կապը<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Հանրակրթության պետական չափորոշիչ, 2011,

<sup>2</sup> Н. М. Бурцева, Межпредметные связи как средство формирования ценностных отношений, СПб., 2001, 231 с.

## **Գ ո ռ ծ ն ա կ ա ն հ ա մ ա տ ե ք ս տ**

Ուսուցման մեթոդը կարելի է բնութագրել որպես ուսումնական գործընթացում ուսուցանողի և սովորողի համատեղ աշխատանք: Ուսուցման մեթոդները բաժանվում են ակտիվ և պասիվ տեսակների՝ պայմանավորված սովորողների՝ ուսումնական գործընթացին մասնակցելու աստիճանով:

- Պասիվ. կիրառման ընթացքում սովորողները միայն նայում կամ լսում են (պատմություն, բացատրություն, դասախոսություն, էքսկուրսիա, ցուցադրում, զննում):

- Ակտիվ. սովորողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպող և խթանող մեթոդները (լաբորատոր, պրակտիկ մեթոդները, գրքով աշխատանքը): Ըստ գիտելիքի ձեռքբերման աղբյուրի՝ առանձնացվում են. – խոսքային մեթոդներ. գիտելիքի աղբյուրը բանավոր կամ տպագիր խոսքն է. – ակնառու–իրազննական մեթոդներ. գիտելիքի աղբյուր են առարկայի, երևույթի, դիդակտիկ նյութի զննությունը. – պրակտիկ մեթոդներ. գիտելիքները և կարողությունները ձևավորվում

---


են որոշակի գործունեության ընթացքում <sup>1</sup>.

Որևէ թեմայի ուսուցման մեթոդն ընտրելիս պետք է հաշվի առնել.

- տվյալ թեմայի առանձնահատկությունները,
- ուսուցման նպատակներն ու խնդիրները,
- ուսումնական ժամաքանակը,
- բովանդակությունը,
- ուսումնական նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,

- տարիքային առանձնահատկությունները,
- ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- նախորդ դասերին կիրառվող մեթոդները,
- պարապմունքների տեսակը և կառուցվածքը,
- դասախոս–ուսանող հարաբերությունների բնույթը,
- սովորողների թվաքանակը,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը...

Ց ն ա կ ա ն հ ա մ ա տ ե ք ս տ



**Գ ծ ա պ ա տ կ ե ր 1.** Հ ա մ ա գ ո ռ ծ ա կ ց ա յ ի ն ու ս ու ց մ ա ն տ ա ռ ր ե ռ ը Համագործակցային ուսուցման տարրերի անընդհատ օգտագործման արդյունքում խմբերը կարող են հասնել համագործակցության բարձր մակարդակի:



## 1. **Դրական փոխկախվածություն**

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից մեկը խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումն է ընդհանուր նպատակին հասնելու համար և գիտակցումը, որ իրենք կարող են դրան հասնել միայն այն դեպքում, երբ խմբի բոլոր անդամները հասնեն իրենց նպատակներին: Սա դրական փոխկախվածություն է և համագործակցային ուսուցման առաջին կարևոր անհատական փուլը:

## 2. **Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն**

Իս մբերում ստեղծել է դրական փոխկախվածություն, անհրաժեշտ է առավելագույնի հասցնել աշակերտների կողմից միմյանց սատարելու գործոնը՝ օգնելով, աջակցելով, նպաստելով, խրախուսելով և գովաբանելով միմյանց սովորելու ջանքերը: Համագործակցային խմբերով աշխատելու ընթացքում, ի տարբերություն ավանդական ուսուցման, սովորողները հաղորդակցվում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Դրական փոխկախվածությունը հանգեցնում է դրական/խթանող փոխազդեցության: Այս դեպքում խմբի անդամները աշխատում են դեմ-դիմաց նստած և ոչ թե շարքերով, որը կապահովի խմբի անդամների արդյունավետ հաղորդակցումը և նրանց առավելագույն մասնակցությունը խմբային քննարկումներին:

## 3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն**

Ընդհանուր առմամբ, ակտիվ ուսուցման, մասնավորապես, համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկն այն է, որ սովորողը հաշվետու է և անձնական պատասխանատվություն է կրում իր ուսուցման ընթացքի և արդյունքների համար կամ խմբի յուրաքանչյուր անդամ գիտակցում է, որ իր ջանքերն անհրաժեշտ են խմբին՝ հաջողության և ընդհանուր նպատակներին հասնելու համար:

#### 4. **Սոցիալական հմտություններ**

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտներն անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Հաճախ այդ հմտություններին չտիրապետելու պատճառով խմբային աշխատանքը ձախողվում է: Համագործակցային ուսուցման հաջողության համար պահանջվում է փոքր խմբերում աշխատելու սոցիալական/համագործակցային հմտությունների զարգացում:

## Հետազոտության ընթացք

Համագործակցային ուսուցման մեթոդների խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության և համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Թեև այս մեթոդի հեղինակը Թեյ-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Շարոնն է, բայց մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա Ջոն Դյուլիի տեսությունից: Դյուլին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում:

Խմբային գործընթացը (group processing), որպես համագործակցային ուսուցման տարր, խմբի անդամների կողմից իրենց խմբի հաջողությունների և արդյունավետ փոխհարաբերությունների, խմբային համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլն է: Խմբերը նկարագրում են խմբի անդամների օգտակար և ոչ օգտակար գործողությունները և որոշումներ կայացնում, թե որ վարքագիծը կամ գործողությունները պետք է բարելավել կամ զարգացնել: Ուսուցիչը խմբերին այդ նպատակով պետք է տրամադրի անհրաժեշտ ժամանակ և ընթացակարգեր: Նման քննարկումները հնարավորություն են ընձեռում ամրապնդելու խումբը՝ պահպանելով արդյունավետ փոխհարաբերությունները խմբի ներսում: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը, մղում են նրանց սոցիալական հմտությունների շարունակական կիրառման: Խմբային գործընթացը այն գործողությունների հաջորդականությունն է, որոնք կատարվում են *n p n 2 ա կ ի* ժամանակահատվածում *n p n 2 ա կ ի* նպատակի հասնելու համար: Այս պարագայում խմբային գործընթացը վերաբերվում է խմբի անդամների անդրադարձին, որի ընթացքում կարևորվում են խմբի

անդամների ջանքերի բարելավումը և կատարելագործումը՝ խմբային նպատակներին հասնելու և արդյունավետ աշխատանքային հարաբերություններ հաստատելու գործում: Խմբային աշխատանքն ավարտելուն պես աշակերտները պետք է քննարկեն իրենց միասնական աշխատանքի բոլոր կողմերը: Ուսուցչի պարտականությունն է կազմակերպել խմբային գործընթացը հետևյալ կերպ.

ա) աշակերտներին ժամանակ տալ իրենց միասնական աշխատանքի մասին մտորումների համար,

բ) աշակերտներին հնարավորություն տալ քննարկել իրենց խմբի աշխատանքի արդյունավետությունը:

Խմբային գործընթացը տեղի է ունենում փոքր խմբերի և ամբողջ դասարանի մակարդակներում: Վերջինս կարևոր է և լրացնում է փոքր խմբային գործընթացները: Խմբային գործընթացը ամբողջ դասարանի համար ունի հետևյալ նշանակությունը.

1. փոքր խմբերում արված դիտարկումները կիսվում են դասարանի բոլոր մասնակիցների հետ,

2. սովորողների կողմից կատարված բոլոր դիտարկումները քննարկվում են միասին,

3. խմբի անդամները սովորում են համատեղ որոշումներ կայացնել, գնահատել և արժևորել արդյունքները և այլն:

Դասի Թեման՝ Ջրի շրջապատույտը բնության մեջ

Դասի նպատակները՝

ա) ակադեմիական

Բնութագրել ջրի շրջապատույտը բնության մեջ

Նշել ջրի քիմիական և ֆիզիկական հատկությունները

բ) սոցիալական

Զարգացնել աշակերտների ստեղծագործական հմտությունները

Դաստիարակել համագործակցային աշխատանքի կանոններին հետևելու կամք և հմտություններ :

Ուսուցման ակնկալվող արդյունքները՝

- Ջրի շրջապտույտը նկարագրելու հմտություն
- Ջրի դերը բնության մեջ կարևորելու ունակություն
- Ջրի եզակի հատկությունների իմացություն

Կազմակերպչական ձևեր՝ ֆրոնտալ զրույց, խմբային աշխատանք,

Մարքավորումներ՝ համակարգիչ, պրոեկտոր :

Դիդակտիկ նյութեր՝

Ցուցադրական՝ ջրի շրջապտույտը նկարագրող պաստառ

Բաշխիչ՝ առաջադրանքներ պարունակող քարտեր և փաթեթներ:

Դասն իրականացվում է ԽԻԿ եղանակով:

## **1. Խթանման փուլ**

«Մտքերի տարափ»

1. Գրատախտակին գրել ջրի քիմիական բանաձևը:

2. Թվարկել ջրի ագրեգատային վիճակները, բացատրել երեք վիճակի համատեղ գոյությունն ու ջերմաստիճանի հաստատունությունը:

3. Բացատրել, թե ինչ նշանակություն ունի ջուրը մարդու կյանքում:

4. Թվարկել ջրի շրջապտույտին մասնակցող տարրերը:

Գունավոր թղթերի օգնությամբ դասարանը բաժանվեց երեք խմբի:

Յուրաքանչյուր խմբի հանձնարարվեց քարտերի օգնությամբ հավաքել

ջրի շրջապատույտը:

Խմբերում ընդգրկված էին նաև **ԿԱՊԿՈՒ** աշակերտներ/հավելված 1/, ովքեր նույնպես ակտիվ մասնակցում էին խմբային աշխատանքին:

## **2. Իմաստի ընկալման փուլ**

Խմբային աշխատանքը սկսելուց առաջ նախապես վերհիշեցինք համաշխարհային օվկիանոսները, գետերը, լճերը:

Թվարկեցինք ջրոլորտի բաղադրիչները:

Նշեցինք ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունները, այնուհետև աշակերտները սկսեցին խմբային աշխատանքը:

## **3. Կշռադատման փուլ, հետադարձ կապ**

Ակտիվացնող վարժության օգնությամբ աշակերտները վերհիշեցին անցած նյութը և կապեցին ջրի շրջապատույտի հետ: Դասավորեցին քարտերը և համառոտ ներկայացրին իրենց կատարած աշխատանքը: Խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները ակտիվորեն համագործակցեցին, քննարկեցին նյութը և համատեղ որոշում կայացրին:

Ամփոփում և գնահատում՝

Գնահատվեցին խմբերը, ըստ իրենց կատարած աշխատանքի և դասի ընթացքում ցույց տված ակտիվության:

Տնային հանձնարարություն՝ վարժ. 1-7, էջ 161

## Ամփոփում

Համագործակցային ուսուցումն այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Այս մեթոդը խթանում է աշակերտների դրական փոխկախվածություն, խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին, համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ: Մշակում և վերլուծում են տեղեկությունը, աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակի հասնելու համար: Ձևավորում են վարքագծային նորմեր՝ անադմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը <<Ձրի շրջապատույտը բնության մեջ >> թեմայի շրջանակներում առավել արդյունավետ է և աշակերտների համար ավելի ընկալելի: Համագործակցային ուսուցման շնորհիվ, բացի ակադեմիական գիտելիքներից, աշակերտների մեջ ձևավորվում են նաև համագործակցելու, միմյանց լսելու և քննադատելու կարողություններ: Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ ակտիվորեն ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքները մշակվում և յուրացվում են հենց աշակերտների միջոցով:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացում՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:



## Գրականություն

1. Սահակյան Լ., Բդոնյան Ք., Քիմիա, 8-րդ դասարանի դասագիրք, Եր., Տիգրան Մեծ, 2014, 232 էջ :
2. Ա. Հովհաննիսյան, Ս. Խրիմյան, Ս. Խաչատրյան, Ն. Բայաթյան, Լ. Ալեքսանյան, Վ. Պուրուկուրու, Երևան, 2005, էջեր 10-12, 27-34:
3. Վ. Շատալով, Մ. Շչեպինին, Ն. Գուրիկ, Ս. Լիսենկովա, Համագործակցության ամսկալար ժոյն :
4. Սահակյան Լ. Ա., Քիմիա, Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարանների համար, Լ. Սահակյան, Ռ. Հ. Հովսեփյան, Ս. Ն. Նավասարդյան, Կ. Գ. Ավետիսյան, Եր., Արևիկ, 2007, 176 էջ :
5. Johnson, D., Johnson, R. (1999). Learning together and alone: cooperative, competitive, and individualistic learning. Boston: Allyn and Bacon